

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանեանի խանութում:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Ռուսաց. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կօպէկ:

ՄԶԱԿ

Լրագրի խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ կէս տարվայ բաժանորդական գինը լիովին չեն տուել խմբագրութեանը, շտապէն լրացնել իրանց բաժանորդագինը:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հայերի կրթութեան գործը. — Ներքին տեսութիւն: «ГОЛОСЪ» լրագրի յօդուածը արեւելեան խնդրի մասին: Նամակ Շամախուց: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ֆրանսիա: Փարիս: Նամակ թիւրքիայից: Արտաքին լուրեր: — Սառն լուրեր: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Երբ որ մենք խօսում ենք ազգի կրթութեան մասին, մենք առհասարակ կրթութիւն բառով հասկանում ենք միմիայն ուսումնարանները: Բայց ուսումնարանները մեր հասարակութեան մէջ միակ միջոց չեն կրթութիւնը տարածելու:

Իրանք ուսումնարաններն էլ բաժանվում են, ինչպէս յայտնի է, երեք տեսակների վրա՝ տարրական, միջնակարգ և բարձրագոյն:

Մենք հայերս ունենք արդէն Կովկասում և Մանգրիկայում բաւական բազմաթիւ տարրական և միջնակարգ դպրոցներ և վերջին ժամանակ մինչև անգամ հիմնվեցաւ մի հայոց բարձրագոյն, թէև աստուածաբանական դպրոց, Ս. Լիւթիմանի ճեմարանը:

Բայց մի հասարակութեան մէջ ճշմարիտ և հաստատ ուսում տալու ճանապարհը ուսումնարանները, որքան և բազմաթիւ լինէին նոքա, բաւական չեն... Կան ազգի մէջ կրթութիւնը տարածելու համար և ուրիշ, նոյնքան հաստատ գործիչներ: Եւ գործիչները սրանք են՝ լրագրութիւնը, գրականութիւնը, թատրոնը և հրապարակական դաստիարակութիւնները:

Լրագրութիւնը, վերջին ժամանակ, կարծես, հաստատ չիմք, հաստատ արմատներ սկսում է գցել մեր ժողովրդի մէջ: Բայց և այդ դեռ բաւական չէ: Միայն դպրոցներով և լրագրութեամբ մի ազգի կրթութիւնը առաջ չի գնայ:

Ո՞վ է յաճախում ուսումնարանները, — հասարակութեան նոր սերունդը: Ո՞վ է լրագիրներ կար-

դում, — նոքա, որոնք ուսումնարանից են դուրս եկել:

Բայց մեր հասարակութեան այն մասը, որ ուսման ծարաւ ունի, բայց որ երբեք առիթ չէ ունեցել ուսումնարանը յաճախել, մեր հասարակութեան միջին հասակի մարդիկ, որոնք կրթվելու ցանկութիւն ունեն, բայց այնքան գրագէտ չեն որ կարգան լրագիրներ և ամսագիրներ, — այդ տեսակներին մենք կրթվելու ի՞նչ միջոց ենք առաջարկում... Ոչինչ:

Հասարակութեան այդ մասի մէջ կրթութիւնը տարածելու համար պէտք է ազդել նրանց վրա կենդանի խօսքով, պէտք է ներգործել նրանց լսողութեան և տեսանելիքի վրա: Եւ տեսանելիքի, այդ հասակ առած երեխաների համար պէտք է նոյնպէս հիմնել ուսումնարաններ... այդ ուսումնարանները՝ թատրոն և հրապարակական դաստիարակութիւններ են:

Մինչև անգամ նոքա, որոնք գրագէտ են, նոքա որոնք տարրական և միջնակարգ դպրոցների մէջ իրանց ուսումը աւարտել են, նոքա էլ հարկաւորութիւն ունեն ուսումնարանից դուրս գալուց յետոյ շարունակել իրանց ուսումը, շարունակել կրթվել, զարգանալ կենդանի խօսքի միջոցով: Սրանց համար էլ թատրոնը և հրապարակական դաստիարակութիւնները կրթութեան լրացուցիչ, կատարելագործող միջոցներ են:

Եւ, մեր հայոց հասարակութեան մէջ մինչև այժմ աջոյութիւն են դառնում, իրագործել են կրթութեան միայն երկու գործիչներ՝ դպրոցը և լրագրութիւնը:

Բայց մեր արդէան հայոց հասարակութեան մէջ մենք չունենք մինչև անգամ ազգային գրականութիւնը, այդ բառի բուն նշանակութեամբ: Մեզանում չեն հրատարակվում ոչ ինքնուրոյն գիտնական և քաղաքական բովանդակութեան գրքեր և բրօշուրներ, ոչ բանաստեղծական գրքեր, ոչ ազգային ինքնուրոյն վէպեր, ոչ էլ մինչև անգամ թարգմանական գրքեր, թէ բանասիրական և թէ գիտնական բովանդակութեան: Գո՞նէ եթէ ինքներս

միջոց և հմտութիւն չունենք որ հեղինակներ ինքնուրոյն գրվածներ ժողովրդին մատուցել գիտնական բովանդակութեան, եթէ ինքներս չնորհ չունենք ժողովրդացնել գիտութիւնը, ասում ենք, — գո՞նէ բառ առ բառ թարգմանէինք այդ տեսակ գրվածներ ուրիշ լեզուներից:

Մենք կրկնում ենք՝ մենք ունենք, այո՛, դպրոց և լրագրութիւն, բայց այդ բաւական չէ ժողովրդի մէջ կրթութիւնը տարածելու համար... մենք չունենք ինքնուրոյն նոր գրականութիւն, չունենք ժողովրդական գիտութիւն, չունենք գրքեր, չունենք թատրոն, չունենք հրապարակական դաստիարակութիւններ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱԾԸ ԱՐԵՆԵԼՆԱՆ ԽՆԳՐԻ ՄԱՍԻՆ

Ռուսաց «ГОЛОСЪ» լրագիրը իր 254 համարի մէջ հրատարակեց մի առաջնորդող յօդուած, որի մի նշանաւոր կտորը մենք յարմար ենք համարում ամբողջութեամբ ներկայացնել մեր ընթերցողներին, առանց մեզանից որ և է դատողութիւն աւելացնելու:

«Գերմանական «Vossische Zeitg.» լրագրի Բուխարէշի թղթակիցը ասում է որ վերջին լուրերին նայելով արեւմտեան չորս մեծ պետութիւնները՝ Գերմանիա, Աւստրիա, Անգլիա և Ռուսիա համաձայնեցան միմեանց մէջ առաջարկել որպէս հիմք պատերազմող կողմերի համար խաղաղական պայմանների, վեց գլխաւոր կէտեր, որոնց զօրութեամբ ձանաչվում է Սերբիայի և Բուլղարիայի անկախութիւնը, Բուլղարիայի իշխանութեանը միանում է Դոբրուժա, Չերնոգորիա ստանում է այն հողերը որ իր զօրքերով այս րօպէիս պաշարած ունի, Բոսնիա, Հերցեգովինա և Բոլգարիա մնում են թիւրքաց նահանգներ, բայց ստանում են ինքնավարութիւն և կառավարվում են քրիստոնէայ նահանգապետներով, Ռուսաստանը յետ է ստանում Դոբրուժայի այն մասը, որ նա կորցրել էր Դրիմի պատերազմից յետոյ, Փոքր-Ասիայում վերականգնվում է status quo ante bellum, այսինքն պատերազմից առաջ եղած դրութիւնը, և վերջապէս Ռուսաստանը ստանում է թիւրքիայից պատերազմական ծախսերը, որոնց չափը պէտք է դեռ ևս որոշվի:

Անկարելի է չը նկատել որ այդ պրօգրամայի առաջին չորս կէտերը այնպէս են խմբադրված, որ նրանց դէմ երեւի Ռուսաստանը չի հակառակի: Բայց երկու վերջին կէտերը բոլորովին անյարմար են: Փոքր-Ասիայում վերականգնվելու status quo ante bellum, կը

հակառակէր այն նպատակներին, որոնց անուամբ Ռուսաստանը սկսած է ներկայ պատերազմը: Թիւրքաց Հայաստանը բնակեցրած է կիսով չափ քրիստոնէական ժողով, որոնք թիւրքերի կամայականութեանց գրեթէ նոյնքան տանջանքներ են կրել, որքան և Բալկանեան թերակղզու քրիստոնէաները: Այն վեճակը, որին ենթարկվեցաւ այդ նահանգի հայոց ազգաբնակչութիւնը երբ մեր զօրքերը ստիպվեցան ժամանակաւորապէս յետ գալ մինչև մեր սահմանները, պարզ ցոյց է տալիս որ վերականգնեցնել թիւրքաց Հայաստանում առաջվայ կառավարութեան եղանակը, — կատարելապէս անհնարին բան է այն տեսութեան համար, որ իր սուրբ բարձրարեւ է քրիստոնէաների պաշտպանութեան համար և կը նշանակէր ձանաչել սկսած պատերազմի մասնաւոր անաջողութիւնը:

Ճակ ինչ որ վերաբերում է պատերազմական ծախսերի վճարելուն, այդ կատարեալ ծաղի է առողջ դատողութեան դէմ: Ո՞վ չը գիտէ որ բոլորովին անակապած թիւրքիան միջոց չունի վճարել ոչ մի փարա յաղթող հակառակորդին: Փողերի մասին ուրեմն այդ տեսակ հանգամանքներում չէ էլ կարող խօսք լինել:

Մեզ գուցէ կը պատասխանեն որ առաջվայ պատերազմների օրինակին հետեւելով Ռուսաստանը իրաւունք ունի, մինչև որ թիւրքիան չը վճարէ պահանջած գումարը, պաշարել իր զօրքերով երկրի մի յայտնի մաս, որ իր արժողութեամբ հաւասար լինէր վճարելու կոնտրիբուցիային, ինչպէս որ այդ արեւելի գերմանացիները Ֆրանսիայում 1871 թվականին: Սորան մենք կը պատասխանենք որ այդ ձևով թիւրքիայի մի մասի պաշարելը անյարմար կը լինի և Ռուսաստանը նիւթապէս էլ մեծ ֆլանսներ կը կրէ: Թիւրքիան Ֆրանսիա չէ: Մեր զօրքերին, որոնք պաշարված կը պահեն օսմանեան պետութեան մէկ մաս, այն էլ նշանաւոր թուով քրիստոնէաներով բնակեցրած երկիր, անկարելի կը լինի ծածկել պաշարման ծախսերը տեղական աղբիւրներից, նոյնպէս անկարելի կը լինի կատարեալ հաւասարութիւն ընծայել տեղական մահմետականների կամաւոր հնազանդութեանը: Բայց սորանից երկիրների երկաւրաւ պաշարումն կարող է տեղի տալ զանազան անհամաձայնութիւններին, մանաւանդ եթէ աչքի առջեւ ունենանք Անգլիայի յայտնի հակումն խառնվել օտար գործերի, մանաւանդ թիւրքաց գործերի մէջ:

«Թիւրքիայի հետ կապվելու խաղաղութիւնը կարող է կապվել միմիայն այնպիսի պայմանների հիման վրա, որ թղթ տալով Ռուսաստանին կատարելապէս ապահովեցնել թիւրքիայի քրիստոնէաների վեճակը, միջոց կը տար նրան մի անգամից ազաւթել արեւելեան խնդրի մասին իր ունեցած բոլոր հոգսերից և Թիւրքիայի հետ այնուհետեւ էլ գործ չունենալ: Այդ տեսակ նպատակին կարելի է հասնել խաղաղութեան միայն այնպիսի դաշնագրի միջոցով, որ անմիջապէս վարձատրելով մեզ Փոքր-Ասիայի հողերով մեր արած պատերազմական ծախսերի համար, միջոց տար մեզ մի անգամից վերջացնել թիւրքիայի հետ ունեցած մեր բոլոր հաշիւները: Փողով մեր ծախսերը վճարելու փոխանակ մենք պէտք է պահանջենք բնական վարձատրութիւն, այսինքն երկրներով, և համարձակ կարող ենք ասել որ միայն այս

Հիմունքների վրա հնարաւոր է սկսել խաղաղութեան մասին հաստատ բանակցութիւնները»

ՆԱՄԱԿ ՀԱՄԱՆՈՒՑ

Հոկտեմբերի 26-ին

Քաղաքիս Ս. Աստուածածնայ եկեղեցու դէմ առ դէմ, մի բարձրաւանդակի վրա կանգնած է մի փառաւոր շինութիւն, որը պատկանում է քաղաքիս ամենաերեւելի անձերից մէկին. այն շինութեան դէպի արեւելք նայող պատի վրա նրկատելի է մի մուկ խորշ: Առաջին անգամ մի հետաքննիչ հայեացք ձգելով այդ անբնական խորշի վրա, մարդ ակամայ զգում է իր մէջ մի ծածուկ զարհուրանքի ցուրտ սարսուռ, երևակայութեան վրա տիրում է անբացատրելի մի վատ տպաւորութիւն, կարծես դարերի ձայները անգիտակցաբար միմեջում են քո ականջիդ լիք է այս խորշը որ այժմ այսպիսի խղճալի դէմքով դէպի ցած է նայում, մի ժամանակ ծառայած է շատ զարհուրելի եղեւնադործութեանց, սակայն այդ տպաւորութիւնը կամայ ակամայ անյայտանում է երբ հեռուից նկատում ես մի քանի աղիւկերանց, հարսերի խումբեր, որոնք առաջնորդված հասակաւոր կանանցից, ծածկված իրանց անթափանցիկ շարաւարի տակ, գրկերում սեղմած փղերիկ, լալկան մանուկներ, զգուշութեամբ մօտենում են այդ խորշի բերանին, և հետաքննիչն աչքով նկատելով իրանց շուրջը և կարծես իմանալով որ այդ վայրերի տեղում ոչ մի հետաքննիչ տեսութիւն չէ գնում իրանց, դողդողալով, մէկը միւսի ետեւից անյայտանում են ներսը տիրապետող մթութեան մէջ: Տառնեք մեր ընթերցողներին այդ խորշի ներսը, և տեսնենք թէ ինչ մազբխական մի զօրութիւն քարշում է դէպի ինքը որ քո քնքուշ էակները, որոնց ներկայութիւնը երկում է մեզ այդքան անբնական այդ վայրերի տեղի մէջ: Մի հողի բարձրութիւն որի տակը ձգվում է մի գառնիվայր ճանապարհ, որ անյայտանում է քաղաքի հարաւային ուղղութիւնում, ծառայում է այդ բարձրաւանդակին որպէս մի անդունդ, ուր կարող էր վերջին հրաժարականը տալ իր կեանքին այն անզգոյշ անցաւորը որի քայլերը անգիտութեամբ կարող էին փոքր ինչ չեղիել իրանց ընթացքից: Նոյն իսկ այդ բարձրաւանդակի վրա, մի քանի քաղ խորութեամբ դուրս է ցցում իր խաւար և մուլլոտ դէմքը վերոյդէալ խորշը, ոչ մի դուռ, ոչ մի ծածկոյթ չէ պատսպարում նորա մուտքը, կարծես մեր քաղաքի մէջ այդ է մի միայն որ ծառայում է հասարակական օգտին, որի վրա կարող էին ազատ իրաւունք ունենալ թէ անգլաւտ և թէ հարուստ, թէ կէր և թէ տղամարդ, թէ ծեր և թէ երիտասարդ: Մի աստիճան ներքև հակիւղ քարէ սանդուխտ ներս է տանում այդ խաւարապատ այրի մէջ. առաջին անգամ ներս մտնելով մթութիւնը արգելք է լինում որոշել այդ սենեակի մէջ գտնված առարկաները. միայն զգում ես խոնավութեան զգուշելի զարհուրանութիւնը, որը համարեալ բոլորովին տակն ու վրա է անում մարդու սիրտը. բայց երբ կամաց կամաց պարզվում է տեսութիւնը, երբ նկատելի է դառնում այդ սենեակի ներքին տեսքը, անկարելի է լինում զսպել մի ներքին ակամայ սարսուռ. կարծես նոյն իսկ այդ րօպէին աչքիդ առաջ կատարվում են այստեղ գարհուրելի ոճրագործութիւններ: — Սա մի բաւականի ընդարձակ կամարակապ սենեակ է, քարեպա պատերից ծորում են խոնավութեանց արտադրված կաթիլ կաթիլ ջրերը իրանց անախորժ բուրմունքով, յատակը բորբոսնած է բլուրով, որի վրա նկատվում են վաղուց ամրացած ստորերկրեայ ճանապարհի ծածուկ հեռքերը, ճիշդ սենեակի մէջտեղ երկարացրած է մի մեծ տափարակ քար, որը ինչպէս երևում է ծառայում է գերեզմանաբար: տեղ և արի մաս, ինչպէս նկատվում է քարի վրա գրած արարելի արձանագրութեանց, հանգչում է մի կոյր ֆանատիկ թուրքի փոշիացած ոսկերտիքը (այդ գերեզմանի հուղիւսան մասին անկարելի է ճիշդ տեղեկութիւն հաղորդել, որովհետեւ արձանագրութեան մէջ անորոշելի է թուականը, սակայն ինչպէս պատմում են այդ գեռ ևս քաղաքի հիմնիկուց շատ ու շատ առաջ է եղել, թէ եւ Շամախու հիմնադրութիւնը ևս վերաբերվում է շատ հին դարերի), քարի վրա խառն ու խուռն ցրված են կոտորված շիշերի փշտոնները, ոչ լալի, տավարի կոճղներ, գանազան ոսկորներ, փայտի վրա փաթկած հին չորերի կոտորանքներ և այլ այսպիսի անհասկանալի նշաններ: Կոյր

նախապաշարումը ծնեցրել է ժողովուրդի երևակայութեան մէջ զանազան դարձանալի առասպելներ այդ սենեակի մէջ հանգչող անհատի համար, մինչև որ այդ առասպելները անվերջ, զարգանալով նոցա երևակայութեան մէջ դարձել են անհամեմել իրանց (ի հարկէ տգէտ դասի) աչքում, որոնց հերոսը արժանացել է սուրբ անուան: հարկ չը կայ ասել որ այդ նախապաշարումը նախ և առաջ ծովիկ է թուրքերի մէջ, որոնցից կամաց կամաց սկսել է տարածվել և հայերի մէջ. այժմ այդ սենեակը Շիրվան փերի (Շիրվանի սուրբ) անուամբ ծառայում է որպէս ուխտատեղի ինչպէս թուրքերի, այնպէս և հայերի համար. սա անուանվում է հիւանդների ազատարար սուրբ, բժշկում է ամեն տեսակ հիւանդութիւններ, որոնց բժշկութեան համար առնօգուտ են համարվում բժշկի գեղերը. և ճշմարիտը խոստովանելով պիտի ասած որ երևելի բժիշկ է այս, որովհետեւ թէ բժիշկը, թէ գեղը, թէ դէղատոմսակը և թէ գեղարանը բոլորը իր մէջ է ամփոփում և պատահած ժամանակը ևս շատ շուտով վերջացնում է այն հիւանդի հետ որը ապաւինվում է իրան, ազատելով նորան յաւիտեանս յաւիտենից:

Առաւօտեան արշալոյսին քանի որ արեգակը դեռ ևս չէ բարձրացած երկնքի վրա, ինչպէս և երկնային մինչդեռ արեգակը մայր է մըտնում արեւմուտքում, Շամախու փակված կանայք, թէ հայ և թէ թուրք, խտտած իրանց փոքրիկ մանուկները, գալիս են ուխտ այդ սրբի գերեզմանին, նոքա կանգնեցնում են իրանց մանուկները քարի վրա, իսկ իրանց չղջում են քարի գլխին, նախ և առաջ դէպի սուրբը իրանց մաղթանքը անելուց յետոյ լվանում են հիւանդի երեսը, ձեռքը և ոտքը ջրով որը իրանք առանձին շիշի մէջ բերում են իրանց հետ, երբ վերջանում է այդ գործողութիւնը, մայրը առնում է դարդակ շիշը որի մէջ պարուհակված ջրով լվացել է իր գլուխը և ստատկութեամբ խփելով քարին փշուր փշուր անում նորան, այդ նշանակում է որ շիշը մատաղ եղաւ սրբին, յետոյ առնելով մանուկը քարի վրայից և անհասկանալի խօսքեր միմեջելով առանց յետ նայելու դուրս է գալիս այս սենեակից, իր անցած տեղերով ոսկորներ և չորի կոտորանքներ ցանկելով ինքը իր մէջ բոլորովին հաւատացած որ իր որդին այս սուրբի միջնորդութեամբ շատ շուտով պիտի առողջանայ, չը կանակածելով երբեք որ այդ սուրբը, որից իր որդու առողջութիւնն է խնդրում ու գիտէ գուցէ իր սուրբ մի ժամանակ նորա պապերի արևուն մէջ թաղված և նոցա արտասուքով է սրբած...

Աւելի հեռու դէպի արևմուտք, քաղաքից դուրս, մի կանաչադարձ դաշտի մէջ բարձրացած են երկու քար հաւասար ուղղութեամբ, այդ քարերի վրա դրած է մի երրորդ քար այնպէս որ ինքն իրան վեր առած այդ երեք քարը միասին ձևացնում են մի ծակ, որի տակ չինած է մի մոխրալից փոքրիկ կուպ, ինչպէս երևում է ժամանակի հոսանքից այդ քարերը սկսեցել, մաշվել և դէպի ցած են իրվել, այնպէս որ հազիւ թէ մի մարդ երեսի վրա պոռկած դժուարութեամբ կարողանայ ոտով այդ ծակի միջով քարերի վրա նկատելի են այրված ամսերի հետքեր, ինչպէս մեր վերև յիշված սրբում այստեղ ևս նկատվում են այն խորհրդաւոր նշանները, ինչպէս կոճղներ, ոսկորներ և չորի կոտորանքներ որոնց պարունակութիւնը շատ դժուար է հասկանալ. քարի չորս կողմով սփռուած են թուրքի գերեզմաններ, ինչպէս ասում են այս քարի տակ են հանգչանում է մի երեւելի սուրբ թուրք Վաղի փոշին, սակայն զարմանալին այն է որ փոշինակ այդ սրբատեղին ևս սուրբի յատուկ անակնառն պատվելու, քաղաքացիք բաւականանում են միայն ծակ քար անուանելով նորան. այդ սուրբը ծառայում է չեբքը կանանց օգտին, այստեղ են յաճախում այն ամուկ կանայք որոնք ցանկանում են որդի ունենալ. ի հարկէ որդիք էլ շատ դժուարութեամբ և կարելի տեսանել, մինչև որ այն ամուկը երեք անգամ այդ քարի միջից մեծ դժուարութեամբ երեսի վրա պոռկած չը ոտդայ այս կողմից այն կողմ, որ համարեալ մեքենայական տանջանք է խեղճ կնոջ համար, և կուպի միջի փոշուց չը հալէ մի փոքր իր բերանի մէջ, նոյնպէս և չը վառէ մոմեր քարի վրա և չը ցրվէ ոսկորներ իր ետևում, նա չէ կարող զաւակի տէր լինել: — Բայց ասա մի երրորդը ևս:

Քաղաքի հիւսիսային կողմում մի բարձր ծաղկաւտ լեռան գլխին, չըպատմված անուշահոտ ծաղիկների թփերով գտնվում է հին ժամանակներից մնացած մի մալարալից կրակարան, թէ չը ժամանակից այդ կրակարանը կանգնած է այն-

տեղ. այդ ոչ ոք չէ կարող գուշակել, թուրքերը պատմում են իբրև թէ իրանց իմամներից մէկը այդ օջախի վրա խորված է արել, իսկ հայերի պատմածին նայելով մի թուրք որ ընդունած է եղել քրիստոնէութիւնը և հոգւով ու մարմնով ծառայելիս է եղել այդ կոնիսին, ենթադրելով իր մօլեռանդ աղգակիցների զարհուրելի չարարանքին, նահատակվել է նոցա ձեռքով. որոնք չը բաւականանալով նորա անասելի չարարանքներով, ի վերջով ապականված դիակը զոհ են դարձրել կրակին, ճիշդ այնտեղ որտեղ կանգնած է այժմ այս կրակարանը. և այն օրից սկսեալ այդ եղել է սրբատեղի ինչպէս քրիստոնէաների, այնպէս էլ իւրաքանչիւր մի հաւատացեալ մուսուլմանի համար, այդ սրբատեղին անուանվում է սարլիս (գեղնոց) որովհետեւ նա փարատում է երկիւղից կամ հիւանդութիւններից առաջացած գեղնութիւնները. — Բացի սոցանից կան այլ ևս ուրիշ սրբատեղիք, որոնք ծառայում են այլ և այլ հիւանդութիւնների բժշկութեան, ինչպէս մի քան փերի անուանված տեղը, ուր յաճախում են մորթու հիւանդութիւն ունեցող անձինք. — դ ո գ ա դ ի լ Ն ա շ, — գիծերի և խնդերի սուրբ, թէ ե իրաւացի պատճառով սոցանից ամեն մէկը իրաւունք ունէր անուանվել գիծերի և խնդարներին սուրբ, որովհետեւ մեք բերքը մի խնօք ինքն իրեն հասկացող, մարդկութեան պարտաւորութիւնը ճանաչող անձն չենք տեսած սոցանից մի որ և իցէ մէկը յաճախելիս. կան այլ ևս ուրիշ շատերը որոնք եթէ մի առ մի թվէինք, պիտի ստիպվէինք մի ամբողջ գիրք շարադրել:

Մեր քաղաքացիներից շատերի մէջ այդ աւելորդապաշտութիւնները այնքան զարգացած, այնքան արմատացած են որ դարերի ընթացքում անգամ չէր կարելի արմատախիլ անել նրանց. շատերն են որոնք ամեն ժամանակ յաճախում են այս ծաղրելի սրբատեղիքը և նոյն իսկ շատերն էլ գիտեն որ այդ ոչինչ է եթէ ոչ մի ծաղրալի աւելորդապաշտութիւն, սակայն անդորուելի են նոքա իրանց յամառութեան մէջ. փորձեցէք ցոյց տալ այդ տգէտներին նոցա սխալմունքը, իսկոյն ամեն կողմից հալածանքներ կը թափվեն ձեր գլխին, որովհետեւ դուք դեռ ևս անցեալ օրվայ ձուլից նոր դուրս եկած մանուկը պիտի համարձակվէք խորհուրդ տալ այդ ոսկորները ամեն մի փորձերի մէջ հաստացրած պարոններին, պիտի համարձակվէք հերքել այն ուղղութիւնը որ ստացել են նոքա իրանց հայրերից, պապերից... փնհ. նոր հաւեր են դուրս եկել երկաթի ձուլեր են անում, զգուշութիւն ապա թէ ոչ ձեզ կը պարսաւեն որպէս հերետիկոս, հազարաւոր վայրութիւններ կը բերեն իրանց առականից, մասալներից. սիրտ արէք ընդմիջադիւրէն նորանք, այն ժամանակ վայ ձեզ, դուք խելագար եք, բաւական է որ նոցանից մէկը յայտնեց թէ դուք սուրբերին ուրանում էք: Կուք կամենում էք քանդել նոցա նախնական ծէսերը, այնուհետեւ ձեր անունը ջնջվում է նոցա յիշատակարանից, ամենքը նախում են ձեզ վրա իբրև խելագար, իբրև Աստուածուրաց մէկը, դուք այլ ևս հասարակութեան անդամ չէք (մեր խօսքը այստեղ ընդհանրութեան համար է, այլ սոցա մի դատաւարի, որոնք անուանվում են դալաքխանի հասարակութիւն) մինչև անգամ շատերը անամօթ կեղծաւորութեամբ իրանց ցաւակցութիւնն են յայտնում ձեզ համար, մոլորեալ ոչխար անուանելով: — Բայց միթէ հազար անգամ երջանկութիւն չէ չը համարվել այսպիսի մոլեռանդութեամբ խմորված հասարակութեան անգամ, քան թէ ենթարկվել նոցա տգիտութեան և յաւիտեան կորչել, անհետանալ այդ անկարելի անդունդի մէջ. — հաստատված ճշմարտութիւն է որ ճշմարիտը խօսողը գտակը միշտ ծակ կը լինի:

Ա. Չախարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Շուշի 28 հոկտեմբերի

«Մշակ» պատուական լրագրի № 70 տպված իմ հարցերին բաւարար պատասխանի արժանանալով (եթէ ոչ կեղծ նամակագիր պ. Գ. Տ. Գ.-ից, գոնէ պ. Վ. Պապալանեանից), այլ և սրտի ուրախութեամբ տեսնելով թէ իմ հարցերը որչափ ուշադրութեամբ արժանացան և որչափ զբաղեցրին Շուշիցի ազնիւ եղբայրներին, այնպէս որ նրանք այսօր պատրաստվում են հաշիւ ու համար պահանջել իրանց գործերի մասին «պտտոր ջրում ձուկ որսող» մի պարոնից, ես, «Մշակ» լրագրի յարգողներից միսն, իրն-

գրում եմ ձեզ տեղ չնորհել նաև հետեւալ կարեոր հարցերիս:—

1) Ճշմարիտ է արդեօք, ինչպէս լսում ենք էջմիածնից ստացված հեռագրերից, որ մեր զպրոցը օտարացրել են իսկ եթէ սուտ է, ապա ով է հաղորդել այդ վեհափառին և ինչ նպատակով:— Այժմ գոնեւս ապահով է մեր զպրոցը:

2) Կպրոցը ունէր երեւնի, չուցեցինք յայտնի, հարուստ գրադարան:— Ինչ զրուծեան մէջ է նա այժմ, ուր են կորած գրքերը:— Հայկազեան բառգրքերի հատորները ում մօտ են գտնվել. ում մօտ է նաև «Միլիտան»...

3) Արդեօք ծախվել են 25, 20, 15 րուբլիներով այս ինչ կամ այն ինչ տիրացուի վրա, առանց ենթակելու այդպիսին հրապարակական քննութեան, սեմինարիայի ատտեստատները:— Կայ արդեօք այս մասին կանոնադրութեան մէջ որ և իցէ իրաւունք:

4) Ուսումնարանի տեսչութիւնը ինչ խորհրդով կամենում է զպրոցի կից շինութիւնը օրիորդական զպրոց շինել և ինչ հիմունքով մի վարդապետ չէ համաձայնվում:

5) Ի՞նչ մտքով պ. պ. ուսուցիչներ կամեցան խնդրել հոգաբարձութենից ուս. տղարանը և եթէ այդ չէ յանձնվել առ այժմ, ապա ով, ում խորհրդով է բանաջնում. յայտնի է արդեօք արպարանի մուտքի մասին:

6) Ուսումն. ունէր թատրօնական պիտոյք. ում մօտ է այն այժմ:

7) Արդեօք ուս. կառավարչութեան մասին և տեսչի առթիւ տրվել է որ և իցէ ծածուկ մահացող տեղեկութիւնք:

և 8) Ի՞նչ նշանակութիւն ունի առաջնորդը Շուշիի համար և ինչ պարտականութիւն ունի կատարել նա:— Ի՞նչ գործ է կատարել հոկտեմբերի սկզբում այդպիսի «ազգասէր» մի հայր սուրբի ձեռքով զպրոցը կործանելու մտքով...

Սպասում եմ կրկնակի պատասխանի «Մշակի» միջոցով հարցերիս տեղեկ մեծ. պարսններից:

Մ. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՐՇԱՎԱՑԻՑ ստացանք պ. Վարչամեանցից 10 րուբլ յօգուտ Թիւրքայից գաղթած հայերի:

Երկրաչափ պ. Յարութիւնեանցից, ՆԱԼԶԻԿԻՑ ստացանք յօգուտ գաղթականների 5 ռ.:

Ստացանք «Փորձ» հանդիսի երկրորդ տարվայ № II, Այդ տեղալիքի բովանդակութիւնը այս է 1) Նաթան ի մասս ուն, գործ Լէոնիդի, թարգմ. Գ. Բարխուդարեանցի, 2) Կռուսած աղիկ, ազգային վիպասանութիւն, գործ Պերճ Պաօլեանցի, 3) Յուսաստանի անկախութիւնը Ս. Պալասանեանց, 4. Յոյն երիպատերազմական երգը, բանասանդուկութիւն Աղամանյան Կորախի, թարգմ. Գ. Բարխուդարեան, 5) Ներսէս Եպիսկոպոսի և Կաթողիկոսի ժամանակ, Ա. Երեցեանց, 6) Ի մասնական յիշողութիւններից, Յ. Գեղամեան:— Առաջին մասից յետոյ գալիս է Մատենախոսութիւն, զանազան յօդուածներից բաղկացած, յետոյ մի յօդուած Ճանապարհորդական նկատողութիւնը վերնագրով, հեղ. Քալբերտեանի, յետոյ Ազգային տեսչութիւն, Քաղաքական տեսչութիւն և վերջապէս Յաւելու օ. — Գուցէ ուրիշ անգամ մասնամասնաբար կը խօսենք «Փորձ» այդ տեղալի մի քանի յօդուածների մասին:

Հեռագրով հաղորդում են տեղական ուսուրագիրներին, որ գեներալ-մայոր Շուշիցիով նշանակվեցաւ Էրզրումի վիլայէտի նահանգապետ:

Թիֆլիսի Անանեան-Մարիամեան օրիորդաց զպրոցի բացման հանդէսը կիրակի, նոյեմբերի 6-ին չը կատարվեցաւ, այլ պէտք է կատարվի վաղը նոյեմբերի 8-ին, երեքշաբթի օր:

Քանի մի ժամանակից նկատվում է որ Թիֆլիսի փողոցներում սաստիկ պակասել են ֆայետօն երի թիւը, Պատճառը ասում են այն է որ խոտը և գարին սաստիկ թանգացել են և այդ թանգութեան պատճառով կառավարանների կէսը, կամ գոնէ երրորդ մասը թողել են իրանց ձիավարութեան պարապմունքը, գնեցին իրանց համար ֆուրգօններ և պարապում են վաղի-

կապիկաւ և Ներսիսի ծանապարհները վրա բեռնեցին: Եւ իսկ ինքնապատուութիւնը ալ չարեւադարձեալ յայտնուեցաւ: Եւ իսկ ինքնապատուութիւնը ալ չարեւադարձեալ յայտնուեցաւ:

Նոյեմբերի 1-ին և 2-ին թիֆլիսի դատարանական պալատի մէջ քննուեցին «Тифл. Вѣстн.» լրագրի խմբագրի, իշխան Կ. Բէլաբոկի դէմ պ. պ. Հեղուբոկի և Ստալինի յարուցված գործերը: Նրկու գործերի մէջ էլ պ. Բէլաբոկի մեղադրութիւնը էր զրպարտութեան և վիրաւորանքի մէջ: Նրկու գործերուն էլ «Тифл. Вѣстн.» լրագրի խմբագրին դատարանը արդարացրեց:

Լուսմ ենք որ այս ձմեռը դիտարութիւն կայ իրաւործել թիֆլիսի Արուեստաւորների լնկերութեան մէջ հրապարակական դատարանութիւնների շրջանը:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅՈՒՆՆԵՐԻ Եւստակիոս հետեւեալ հեռագիրը ուսաց փողերի նոյեմբերի 2-ի կուրսի մասին, երեք ամիս ժամանակով: Լ օ ն դ օ ն ի վրա փոխանակված ուսաց 100 րուբլ արժէ 23,97 պէնս, փարիզի վրա 252 ֆրանկ և 75 սանտիմ, ուսաց 50% առաջին ներքին փոխառութեան տոմսակը արժէ 216 րուբլ, երկրորդը 209 ր. 25 Կ., Պետական րանկի 50% տոմսակը առաջին շրջանի 95 ր. 37 Կօպ., երկրորդ շրջանի 93 րուբլ 87 Կօպ., 51% րէնտա արժէ 100 րուբլ 12 Կ., վերջապէս պօլուսիպէրիաի գինը 8 րուբլ և 75 Կօպէկ է:

Ֆրանսիական «Temps» լրագրի թղթակից պ. Շարլ դը-Կուստուրի այս օրերս թողեց թիֆլիս և ծանապարհ ընկաւ դէպի Ռուսաստանի ներքին գաւառները, դէպի Մոսկովա և Ս. Պետերբուրգ մայրաքաղաքները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Գերմանական «National Zeitung» լրագրի փարիզի թղթակիցը գրում է որ փարիզի լրագրիները շարունակելով խօսել միևնույն թեման ճգնաժամի մասին, այդ առարկայի վրա տալիս են ամենաբազմաոտեսակ դատողութիւններ: Հանրապետական լրագրիները շարունակում են պահանջել որ մարշալ Մակ-Մաճոն հրաժարական տար իր պաշտօնից: Նոյեմբերի 1-ին արվեցաւ Մակ-Մաճոն մարշալի պալատում մի մեծ ճաշկերոյթ Ամերիկայի հանրապետութեան Գրանտ նախկին նախագահին, որ ծանապարհորդում է այժմ Եւրոպայում: Բացի բարձրաստիճան ֆրանսիացիներից ճաշին հրաւիրված էին և ներկայ էին մի քանի նշանաւոր ամերիկացիներ: Մարշալ և զենեակ Գրանտ խօսում էին միմեանց հետ թարգմանի օգնութեամբ, որովհետեւ Մակ-Մաճոն չը գիտէ անգլերէն, իսկ Գրանտ չը գիտէ ֆրանսերէն: Մարշալը հրաւիրեց Գրանտին քանի մի օրից յետոյ իր մօտ նախաճաշիկի և յետոյ առաքարկեց նրան ներկայ գտնվել պատգամաւորների ժողովի և սենատի նիստերին, որոնք, աւելացրեց նա, երեւի շատ հեռաքրքրական կը լինեն: Մինչև այժմ ֆրանսիական նոր միևնույնութիւնը կազմված չէ: Կարծում են որ ձախ կենտրոններն էլ, որ արդէն ցոյց էր տալիս հաշտութեան ձգտումն դէպի տէրութիւնը, ընդդէմ կը լինի մի միևնույնութեան, որ կազմված լինէր միայն չափաւոր աջ կողմի անդամներից: Անգլիական «Times» լրագրի փարիզի թղթակիցը հաւատացնում է որ հեղուգ Դէկադի հրաժարականը միևնույնութեան կարող է համարվել կատարված իրողութիւն: Այս օրերս կայացաւ ֆրանսիական սենատի ձախ կողմի ժողովը: Այդ ժողովի մէջ սենատոր Կալմոն մի երկար ճառ ասեց, որի մէջ ենթարկեց տէրութեան գործունէութիւնը խիստ քննադատութեանը, և յայտնեց որ հանրապետականներին անհնա-

րին է այժմ հաշտվել տէրութեան հետ: Ծառախօսք վերջացրեց իր խօսքը այն յոյսը յայտնելով, որ ֆրանսիայի այժմեան խռովեալ դրութեանց կը ծագէ երկարատեւ խաղաղութիւն և ներքին բարօրութիւն: Այս օրերս անգլիական Մանչեսթը քաղաքի «Լեյքս» թերթի տէրութեան կրուք անունով ընկերութիւնը մի շնորհաւորական աղբէս ուղարկեց Գամբետտային, վերջին ընտրութիւնների հանրապետութեան համար աջող հետեւանքների պատճառով: Անգլիական ընկերութիւնը սաստիկ գովում է Գամբետտային իր գործունէութեան եղանակի համար, իր համեստութեան համար, յիշում է նրա ազնւիւ և զգոյշ գործունէութիւնը, երբ նա իր ձեռքում կառավարութեան ղեկը բռնած ունէր և յոյս է յայտնում որ եթէ նա շարունակէ ապագա յուսմէ էլ այս ձեռով վարվելու, ֆրանսիան էլ ոչնչէ վախենալու չի ունենայ զանազան սիրահիշներին: Ինչպէս յայտնի է, զանազան Նապօլէոններ և Մակ-Մաճոններ բռնադատելով երկիրը, միշտ ձեւացնում են իրանց հայրենիքի փրկիչն եր:

ԹԻԻՐԵԻՍ

Կ. Պօլսից հեռագրում են Վիեննայի լրագրիներին որ իբր թէ այն դաւադրութիւնը որ գտած են այս օրերս Թիւրքիայի մայրաքաղաքում, դիտմամբ լարված է եղել մեծ վեղբեր Եղհէմ-փաշայի ձեռքով, որպէս զի Միհմադ-փաշայի և նրա կուսակցութեան յարգը վայր ընկնի սուլթանի աչքում: Եղհէմ-փաշան աշխատում է ցոյց տալ որ դաւադրութեան հեղինակները Միհմադ-փաշան է և նրա կուսակիցները: Վիեննայի լրագրիները քննադատելով Կ. Պօլսից ստացած լուրերը, ցոյց են տալիս, թէ որքան անհաստատ է այժմեան թիւրքաց տէրութիւնը և թէ անհնարին է սպասել նորանից խոտաւցած վերանորոգութիւնների կատարման: Բոլոր սերբիական լրագրիները, որոնք հրատարակվում են թէ Սերբիայում և թէ Աւստրիայում, յայտնում են որ շուտով Սերբիան կը յայտնէ պատերազմ Թիւրքիային: Թիւրքերը կենտրոնացնում են իրանց զօրքերը Բելլինայի մօտ, դիտարութիւն ունենով յարձակվել Սերբիայի իշխանութեան վրա, անցնելով Գրինայի գետը: Սերբիացիները շատ աննշան թուով զօրք ունեն Գրինայի վրա: Բարխան-Գալվա և Ալ-Պալանկա տեղերի մօտ թուրքերը ամրացնում են իրանց բանակները: Հին Սերբիայի բոլոր մահմետականներին 15 տարեկանից սկսած մինչև 60 տարեկան հասակը թիւրքաց տէրութիւնը հրամայել է զենաւորվել, վախենալով այդ երկրի քրիստոնեաների ապստամբութեանց:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԵԻՍԻՍ

Կ. Պօլսի, 14-ին հոկտ. 77

Պատերազմի սարսափելի հետեւանքներն օրէ օր աւելի կը ծանրանան նոյն իսկ մեր մայրաքաղաքի մէջ: Կ. Պօլսի վիճակի շատ խեղճ և անուշիկ եղած է. օրագրիներն զարհուրելի դէպքերով լի են ամեն օր: Կոտորած, սպանութիւն, կախաղան, աքսոր, բանտ, այս ամենն ալ կայ, կը տեսուի և կը լսուի յեղճ բողոքներ. այդ նահատակ ազգի որդիներէն 40—50 գրէթէ ամեն օր փրկվապօպօլի և Անգլիանապօլի մէջ պատերազմական տեսանքներն դատուելով կը կախուին, Գեռ երեկ նոյն իսկ այս մայրաքաղաքի մէջ մեր աչքի առջև Կալաթիայի կամուրջի զբլուռն որ Կ. Պօլսի ամենէն աւելի անցորդների ունեցող տեղն է մի բողոքարկի կախաղան հանուեցաւ սոսկալի կերպով և ամենին սարսափ ազդեց: Անկարելի է որ մի մարդ, մանաւանդ մի հայ մարդ, անզգայ լինի և չը վշտակրի, տեսնելով իր վիճակից բողոքարկի վերջին աստիճան ճնշուած և հարստահարուած սոսկալի դրութիւնը, այդ թշուառ ազգի որ իւր հայրենիքի ազատութիւնն ցանկալով, մինչև այսօր հարկը հազարի չափ թերևս զոհ տուաւ իւր

որդիներէն և չը գիտեմք թէ դեռ երբ ամենուրեքս Ալեքսանդր կայսրի դուքն բողոքովին պիտի չարծի իւր պաշտպանած Բողոքարկի վրա և վճռողական միջոցներ ձեռք առնու որ իւր բանակներ կարող լինին ժամ յառաջ գրաւել արողջ Բողոքարկի և վերջացունել այդ սարսափելի անուր ոճիրներ:

Այսպիսի բողոքներ, այսպիսի հրատարակութիւններ լինելէ յետոյ ոչ թէ միայն չեն մեղմացած Հայաստանի մէջ եղած հարստահարութիւններն, այլ և օրէ օր աւելի սարսափելի կերպարան կառնուն: Այս տողեր գրած ժամանակս՝ Վանի վրայով տեղեկութիւն հարցուցի մի Վանցի բարեկամին որ այս օրեր Վանէն ստացած մի նամակն ցոյց տուաւ ինձ: Նամակագիրն յայտնելով թէ օրէ օր աւելի կը սաստկանան հարստահարութիւններն զօրս երկրպէս կը գոչուանայ նկարագրել նամակին մէջ, կաւեցունէ թէ Վանի այժմեան նիւթական վիճակ կառաջնորդէ դէպի սարսափելի սով, իսկ բարոյական վիճակն դէպի կատարեալ յուսահատութիւն:

Եղճ հայեր. բողոքարկներն ազատութիւն խնդրելով զէնք վերցուցին, այդ պատճառով կը չարհարուին և կը կոտորուին. իսկ դուք, անգէն և հնազանդ ժողովուրդ, դուք ինչ պատճառով կը չարհարուիք: Ձեր յանցանքն ալ քրիստոնեայ լինելն է, զի կրօնամոլ թուրքերին առջև քրիստոնէութիւնն մեծ յանցանք է: Բայց բողոքներն գէթ ապագայ կը յուսան, պաշտպանութիւն կը յուսան. դուք ինչ պիտի չահիք արդեօք այս պատերազմին պատճառով ամեն բան կորցունելէ յետոյ: Տեսնեմք թէ եւրոպական քրիստոնեայ տէրութիւններին մէջ ո՞վ այնչափ արդարադատ և մարդասէր պիտի լինի որ ձեր իրաւունքներն ալ պաշտպանէ և ձեր կրած այս դառն վիշտեր փոխարինուին:

Եւրոպական թերթեր կը հրատարակեն թէ հայազգի հազարաւոր կամաւոր զօրքեր կը գրտուին Մուխթար-փաշայի բանակին մէջ: Այդ մեղ անհաւատալի կը թուի. բայց թէ ստոյգ է, յայտնի է որ խիստ ակամայ և անուր բռնութիւններով ստիպուած են զինուորագրուել: Նրբ խաղաղ ժամանակ քրիստոնեայներէն զօրք առնալ և կրթել օրէնք դրուած չէր, ինչ իրաւունք է այժմ զինուոր գրել և անմիջապէս առաքել պատերազմի դաշուն:

Այստեղ չէ կարելի այժմ ազատօրէն հաւաքուել և խօսակցել ազգային խնդիրների վրա զի լրտեսների թիւն խիստ շատցած է և ամեն կողմ կը վիտան. ամեն ազգէ, ամեն հասակ է ամեն կերպարանքով մարդեր կառավարական լրտեսի պաշտօնի կը վարեն վարձակալ զինուորի պէս և այս կառավարութիւն որ կը զանգատի թէ փող չունի և չը վճարի իւր պաշտօնեայների ամսականներն, բազմաթիւ լրտեսներ վարձած է առատ առատ վճարելով: Կառավարական պաշտօնեայներին վրա մեծ տիրութիւն կը նշմարուի. թուրքերն յուսահատական ճիգեր կանեն: Մեր այժմեան վիճակը շատ գէշ է: Աստուած մեր վերջ բարի անէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզից «Հաւասի» հեռագրական ընկերութիւնը հաղորդում է, հոկտեմբերի 31-ից (նոյեմբերի 12-ից) որ պատգամաւորների ժողովը իր ունեցած նստի մէջ ընդունեց ձայների բազմութեամբ ձախ կողմի առաջարկութիւնը քննութիւն նշանակել կառավարութեան և հոգևորականութեան կողմից գործած զեղծումների մասին ընտրութիւնների ժամանակ: Հեղուգ Բիթլի պաշտպանեց ձախակողմեանների առաջարկութիւնը տէրութեան անունով: Ձախ կողմի ձառնախօսները յայտնեցին, որ իրանց առաջարկութիւնը չէ վերաբերվում հանրապետութեան նախագահին, որ սահմանադրութեան զօրութեամբ անպատասխանատու է, այլ վերաբերվում է միևնույններին, որոնք կրում են պետութեան ինքնական օրէնքով իրանց բոլոր արածներին համար պատասխանատուութիւնը պարտաւորութիւնը: Ձախակողմեանների առաջարկութիւնը այս օրերս կը քննվի պատգամաւորների ժողովի մէջ:

Բէլգրադից հեռագրում են, որ սերբիական տէրութիւնը, ընդդիմանալով թիւրքաց տէրութեան պահանջներին, հրամայեց իր զօրքերին մնալ երկրի սահմանների վրա, և յետ չը քաշվել երկրի խորքը:

Հեռագիրը հաղորդում է Վիեննայից որ ուսուցիչ զօրքերը վեր առան մի ամբողջական օրեր, որ տիրապետում է ամբողջ Պլէշայի վրա:

Կ. Պօլսից հեռագրում են որ թիւրքաց պատերազմական խորհուրդը վճռեց հրամայել Օսման-փաշային դուրս գալ իր զօրքերով Պլէշայից: Իսկ Մեհմեդ-Ալի-փաշան, Օրիանիէից մօտենալով Պլէշային, կը նպաստէ Օսման-փաշայի զօրքերին յետ քաշվել Պլէշայից:

Կ. Պօլսից հեռագրում են որ թիւրքայի մայրաքաղաքի մէջ մեծ յուզմունքներ կան: Սօֆիթաները այս օրերումս կրկին հաւաքվեցան մեծ վիզլիի բնակարանի առջև և պահանջում էին որ տէրութիւնը հաղորդի ժողովրդին ձիւղ լուրեր պատերազմի ըեմից:

Անգլադական լրագրիները հաղորդում են որ Պեշտի մէջ բնակվող լեհացիները մի պատգամաւորութիւն ուղարկեցին Կոնստանդնուպոլիս, նրան շնորհակալութիւն յայտնելու նպատակով իր գրած վերջին նամակի համար, որի մէջ նա յայտնում է Լեհաստանի անկախութեան անհրաժեշտութիւնը: Պատգամաւորութեան ղեկավար Պեշտի լեհական կրուքի նախագահ, Գոլումբիեւսկի է:

«Հաւասի» հեռագրական ընկերութիւնը հեռագրում է փարիզից նոյեմբերի 1-ից (13-ից) որ պատգամաւորների ժողովի ձախ կողմի առաջարկութիւնը վերաբերել տէրութեան և հոգևորականութեան վարմունքը և նոյցա արած զեղծումները ընտրութիւնների ժամանակ, այնքան խիստ է գրած, որ Մահ-Մահօն մարշալը յայտնեց թէ չէ կարող համաձայնվել միևնույն տրութեանը իր հրաժարումն տալու: Հանրապետականների և նախագահի մէջ յարաբերութիւնները շատ լարված են և գործերի դրութիւնը շատ կրիտիկական է:

Ձերնօգոյցները վեր առան Անտիվարի մօտ գտնվող թիւրքաց մարտկոցը և նրանց ձեռքը ընկան թուրքաց զերիներ և երկու թնդանօթներ: Անտիվարի պաշարված է չէրնօգոյցներին:

Լօնդօնից նոյեմբերի 1-ից (13) հեռագրում են որ Գլադստօն այս օրերս մի ճառ ասեց, որի մէջ յայտնեց թէ նա պատասխանատու է համարում անգլիական տէրութիւնը արեւելքում ծագած պատերազմի համար և անհրաժեշտ է համարում խտտութեամբ հսկել տէրութեան ամեն մի քայլի մասին, որպէս զի Անգլիայի կողմից պատերազմի մէջ խառնվել անհնարին լինի: Լօնդօնում հրատարակեցաւ տէրութեան հրաման որ խտտութեամբ արգելում է կպցնել քաղաքի պատերի վրա տէրութիւնը պարսաւող, կամ տէրութեան վրա յարձակվող աֆիշաներ:

Աթէնքից հեռագրում են նոյեմբերի 2-ից (14) որ յունաց զօրքը թողնելով իր բանակը թէբայի մէջ, ուղևորվեցաւ դէպի Աթէնքը:

Կանթրիայում եղած թիւրքաց զօրքերը, ինչպէս հաղորդում է հեռագիրը Կ. Պօլսից, կտու կանչվեցան և ուղարկվեցան պատերազմական բեմը:

Կ. Պօլսի մէջ լուր է տարածվել որ իբր թէ Եղհէմ-փաշա շուտով հրաժարեցրած կը լինի մեծ-վիզլիութեան պաշտօնից և որ իբր թէ նրա տեղը կը նշանակվի նախկին միևնույն արտաքին գործերի Սաֆիէտ-փաշա: Այդ լուրը եթէ հաստատվի, ցոյց կը տայ որ թիւրքաց տէրութիւնը կրկին հակվում է դէպի խաղաղութիւնը:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Тифл. Вѣстн.» լրագիրը բացատրում է թէ իր կարծիքով ինչ է գլխաւոր պատճառներից մինը որ մեր երկրի գիւղական ազգայնականութիւնը սկսել է այժմ անտարբեր կերպով վերաբերվել դէպի գիւղական ընտրողական պաշտօնները: Նրբ մտցնեցան մեր երկրում վերանորոգութիւնները, բոլոր գիւղացիները մեծ եռանդով աշխատում էին ընտրվել գիւղական դատարաններ և այլ գիւղական պաշտօնեաներ, իսկ այժմ տեսնելով որ այդ պաշտօնեաների վրա ներդրում է պօլիցիական իշխանութիւնը, գիւղացիները սասեցան դէպի այդ պաշտօնները և այժմ ընդհակառակն ամենքը փախչում են այդ ընտրողական պարապմունքներից:

Մենք ստացանք ԲԱՊՈՒ քաղաքի հայոց Մարգարիտական Ընկերութեան խորհրդական անդամ պ. Խաչատուր Քանան և անցի ստորագրութեամբ հետեւալ նամակը հոկտեմբերի 22-ից: «Պ. Խաչատուր. «Մշակ» լրագրի 74-որդ համարում հրատարակված էր որպէս թէ Մարգարիտական Ընկերութեան խորհրդի ժողովը օրագիր կայացնելով հրաժարեցրել է խորհրդական անդամ Ս տէ փան էին օրիորդական ուսումնարանի տեսչութեանց: Եւ, որպէս խորհրդական

անդամ նորն ընկերութեան, պարտաւորված եմ բացառապէս թէ խորէն վարդապետը (բազու գալու օրից, վերապետը էր և այժմ ևս նոյն վերապետութեան պաշտօնը չարտօնակում է, վասնորոյ խնդրում եմ հրատարակել այս մասին ի գիտութիւն հասարակութեանս:

Ամերիկայի մէջ հրատարակող լրագրիւններից մինը պատմում է թէ ԱՆՏԱՆ-ՁՅՈՒ Քաղաքի մի հարուստ ընտանիք զաշնագիր էր կապել մի արխիտէկտորի հետ, որով այդ վերջինը պարտաւորվում էր մի երեքարկան տուն շինել չորս օրվա ընթացքում, իսկ եթէ այդ գրած անհրաժեշտ պայմանը չը կատարվէր, ճարտարապետը մի գրօշ էր ստանալ տանտիրոջից: Ամե-

րիկական լրագիրը աւելացնում է որ նշանակված պայմանաժամին, այսինքն չորս օրից յետոյ, երեքարկան տունը պատրաստ էր:

Ֆրանսիական ազգային-ժողովի նախկին պատգամաւոր և ձախ կողմի ներկայացուցիչներից մին, Գիւլյօ-Մօնպէրու, ինչպէս հաղորդում են լրագրիւնները, խելագարվեցաւ և նրան յանձնեցին փարիզի երեւելի բժիշկ Լուիսին: Գիւլյօ-Մօնպէրու ամբողջ ժամանակ կրկնում է թէ ինքն խելագարված չէ և զարմանում է թէ նրան տուել են բժշկին: Մի և նոյն ժամանակ նա այս օրերս երկար նամակ է գրել Լուիսին, որտեղ ապացուցանում է թէ ինքն Աստուած է և ստեղծել է ամբողջ աշխարհը... և այլն:

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անգլիոյ վրայ զաղթականների յայտնում է որ յօգուտ կարօտեալ զաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շորեր: Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ: Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին խվանդիկի այժմ հովանախնայի ընթացքաւորը, Իվօրցովի փողոց, Արծրունու տուն, որտեղ և կը ստանան ապված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար: 2—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ հաղթականների յայտնում է որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ զաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագրիւնների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ: Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Չիթլախովի կանտորայում, Շաղինովի քարվանսարայում, (Բաղադիւսանի հոտ):

2—20 (1)

ԲԱՐՈՒՏԵՎԻ ԿԱՆՏՈՐԱ

ԹԻՖԼԻՍՈՒՄ Առամանսկի փողոցում, Կլիստովսկու տուն, Մուգէլովի հանդէպ:

1 ԱՌՆՈՒՄ Է 4 ԾԱԽՈՒՄ Է 5% բանկային տանող (վերգրիչի) տոմսակները:

2. ԾԱԽՈՒՄ Է 5% տանող տոմսակները պայմանաժամի յետոս ձգութեամբ 12 մինչև 24 ամսով և աւելի, 20 րուբլի բէհով:

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է դրամական գնումներ՝ տարեկան և կէս տարեկան պայմանաժամերով և մինչև պահանջ (պրօցէստները կանտոնայի հետ համաձայնութեամբ):

4. ՓՈՒՄ Է ՏԱԼԻՍ գումարներ տոկոսաբեր թղթերի գրաւակաւնով 6 և 10% բօրային կուրսից պակաս: տանող տոմսակների վրա փոխ է տրվում գումարը մինչև 180 րուբլ և վերցվում է 12% տարեկան ծախսերով: Վճարքը թղթ է տրվում մաս մաս:

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրաւ գնելը, վճարում է միացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ բանկերի մէջ գրաւ գրած պարտաւորութիւններով:

6. ԱՊՍՆՈՎ ԱՅՆՈՒՄ Է տանող տոմսակներ հանդչման տիրածից:

7. Տոկոսաբեր թղթերի գրաւակաւնով ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սեփական դարանտիպով, կրկնապատկելով սեփականատերերի եկամուտը:

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է պահելու համար բոլոր տոկոսաբեր թղթերը մինչև պահանջ:

Բոլոր տեղեկութիւնները այն ամենի վրա, որ վերաբերվում է բանկային օպերացիաների, թղթերի գնի, տարած գումարների և տիրաժների մասին, կարելի է անվարձ ստանալ կանտորայում:

18—21 (1)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՓՈՒՄ ՏՐՎՈՒՄ ՓՈՂԵՐ

Գլխաւորապէս վաճառականներին, վճարքի շարժական յետաձգութեամբ: Պայմանների մասին կարելի է հարցնել ՄԻՔԱՅԼԵԱՆ կամուրջի մօտ, ՋՈՒՐԱԼՈՎԻ տանը, Բուխովսկու (Варшавскою Обувю) խանութում, ամեն օր մինչև 1 ժամ կէսօրից յետոյ: 2—3

Մասնագէտ արուեստական առանցքի շինելու և ոսկով պլումբելու: ԴՕԿՏՈՐ Լ. ԲԵՐՆԱՐԴՕ-ԲԵՐԿՄԵՐ ՄԷՐ Պատաւոք անդամ Լօնդոնեան առաջնաբուժական հիւանդանոցների 20—25 (1)

ԱՆՆԱՐԱՐԱՐ Հայոց կենդանի լեզուի ԴԱՍԵՐ և ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ: Հարցնել «ՄՇԱԿ» լրագրի խմբագրատանը: 2—10

Մամուլի տակից գուրու եկաւ Գ. ԱՐՈՎԵԱՆՑԻ Հայոց պատմութիւնը, երկրորդ ապագրութիւն, ընտիր թղթի վրա և մաքուր տպած: Յանկացողք ձեռք բերել կարող են գինել հրատարակիչ պ. պ. եղբայրք Զ. և Բ. Արզումանյաններին: սոցա խանութը Միխայէլովսկի կամուրջի վրա Գիւլյո ճատով առնողների համար 60 կօպ., իսկ 20-ից աւելի գնողներին 50 կօպէկ: 3—3

„ՄՇԱԿ“ խմբագրատան մէջ ծախվում է տպելու ԹՈՒՂԹԵՐ ԷժՈՒՆ ԳՆՈՎ: Տեսնել կարելի է ամեն օր առաւօտները, մինչև 12 ժամ կէսօրի: В редакции «МШАКЪ» по случаю продается дешево комментарная бумага. 1—5

СКЛАДЪ РАЗНЫХЪ СОРТОВЪ БУМАГИ помѣщается на углу Вельяминовской улицы, рядомъ съ конторою газеты «Кавказъ» въ домѣ Хоероева. ՋԱՆԱՋԱՆ ՏԵՍԱԿ ԹՎԹԵՐԻ ՊԱՆԵՍՏ գտնվում է վելիամիովսկայա փողոցի անկիւնում, «Кавказъ» լրագրի խմբագրատան մօտ, Խօսրօսկի տանը: 1—3 (1)

ՆՈՑԵՐԵՐԻ 7.			Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց			ԹԻՖԼԻՍ. 1877.								
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Նոյեմբերի 7-ին)			Բ.	Կ.	ՀԵՌԱԿԻՐ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ			ՓՈՍՏ			«ՄՇԱԿ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ		
Ոսկին (պղծանքիւրալը)			8	37	Կովկասի և Ան-գրկովկասի քա-	Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9			1) Ամեն տեսակ թէ նա-մակներ, թէ լրագիրները			գոռի տրակտից՝ երեք-		
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.			1400	—	ղաքները	ժամին 21 րօպէ առաւօտեան:			Ռուսաստանի և ար-			շաբթի և չաբաթ օրերը:		
Հին 20 կ. 72 պր. 1000 »			1250	—	1 Ռուսաստան	Մինչև Միխայէլով (խառն գնացքը) երեկոյան 5 ժամ. 18 րօպէ:			տասն հման ուղարկե-լու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)			Նրևանի տրակտից եր-		
Վերջինի 500 առաջի փո-խաւորութեան տամ. 100 »			220	—	2 Աւստրիա				11. 58			շաբթի և չաբաթ օրերը:		
Վերջինի 500 առաջի փո-խաւորութեան տամ. 100 »			215	—	3 Անգլիա				1. 29			Սուսոյի գործը:		
Երկրորդ 50% վերջինի »			100	—	4 Վերմանիա				6. 47			Ս. Զ. Ս. Կը կատարենք ձեր խնդիրը:		
Մարտիկ կուրսը 254—75 Ֆ.			100	—	2 3 Ֆրանսիա				9. 40			— Ս. Զ. Ս. Կը կատարենք ձեր խնդիրը:		
Վրա.			9	88								— թիֆլիս. Մ. Հասցրինք		
Վենայի կուրսը ամէ 121 գլ.			100	—	ԱՆԴՐԿՈՎԱՍԵԱՆ ՄԱՆ-ԿԱՐԱՐԱՆԱՆ ԴՊՐՈՑ (վէրայի վրա № 38)						Արեւոտաւորների ընկերու-			
Վալերիի բարաբը.			5	70							4 թեանք ձեր տուած Պ-ի անդա-			
Աւետարական քանիկ ակ-ցիան 200 մ.			265	—							8 մական վճարքը:			
Փօթի թիֆլիսեան երկա-թուղտ, ակցիան 125 մ.			125	—							— Վ. Ս. Մ. Վ. Ա. Վ. Կուդար-			
Շաքարի րօպէր			8	90							8 կենք այսուհետև, ինչպէս խըն-			
» միւս տեսակը.			8	70							8 զրած էք «Մշակ» լրագիրը ձեր			
» չարաբուրաղը.			8	20							8 անունով, փոխանակ վարչակա-			
» տրանսպորտ.			8	80							8 Կուսակցի զօրքը:			
» մարդը վճարած			13	—							— թիֆլիս. Խ. Ե. Օ. Չէ,			
Բաժարակ (երեսնու. Ա-			9	40							մենք չը մասնակցեցինք և սո-			
մերիկայի սերմից.			8	50							70 վորութիւն ու ժամանակ չու-			
Միւս տեսակը ին սերմից.			7	50							նենք այդ տեսակ հանդէսնե-			
Բուրգի թուշի.			7	50							րին մասնակցելու:			
» թարաքամի.			3	50							— թիֆլիս. Բ. Տ. Ստացանք			
Ալիւրի Շորագալու.			2	—							ձեր տոմսակը: Կը սպանենք			
» Երեսնի.			—	—							վաղը երեկոյեան խմորադա-			
Գարին.			1	35							տան մէջ:			
Մոմը քնածարպի (сгар.)			14	80										
Մեծ աքս Նուխալ.			154	—										
Կախեթ ունը.			100	—										
Կոկոնը Նուխալ (քոմ.)			34	—										
Յրիգոնը (լասը) Ագու-լեաց.			55	—										
Կոֆէն մօկօթի.			28	—										
Վրա.			—	—										
Արեւոտաւորների ընկերու-			98	—										